ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2023Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2023թ. ընթացքում ՀՀ ոստիկանության պատմության թանգարանի կողմից տարվող աշխատանքները նպատակաուղղված են եղել ՀՀ ոստիկանության պատմության թանգարանի հիմնադրման 46-ամյակի արժանավայել դիմավորմանը:

Հաշվետու ժամանակաշրջանում թանգարանը շարունակել է համագործակցությունը կրթահամալիրի ծառայությունների և այլ թանգարանների հետ:

Կրթահամալիրի ուսումնամեթոդական և զարգացման վարչության միջազգային համագործակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման բաժնի միջոցով <edupolise.am> կայքէջի ՀՀ ոստիկանության պատմության թանգարան բաժնում տեղադրվել է ՀՀ ոստիկանության պատմության թանգարանի 2022թ. տեղեկանքը, դպրոցների աշակերտների այցելությունները, ստացվել է Իրանի Իսլամական հանրապետության Ամինի ոստիկանության համալսարանի նվերը, ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի նորակառույց ճեմասրահում տեղադրելու համար թանգարանի ֆոնդերից հանձնվել է կրթահամալիրի պատմությունը լուսաբանող նկարներ՝պատճենահանման համար:

Կրթահամալիրի գնումների խմբի և տնտեսական բաժնի հետ համագործակցության արդյունքում թանգարանի 22 ցուցափեղկում տեղադրվել է արհեստական թավշյա կտոր, տեղադրվել է 2 ցուցափեղկ, 3 հենարան, 1920-1940թթ. միլիցիայի աշխատակիցների 12 լուսանկար և 1977թ. նոյեմբերի 10-ին հիմնադրված թանգարանի 1921-1991թթ. լուսաբանող 6 պլակատ:

Թանգարանի կողմից <Պատիվ ունեմ> պաշտոնաթերթի թիվ 6, 7, 9 համարներում հրապարակվել են համապատասխանաբար <Շնորհավորում ենք մեր գործընկերոջը>, <Հանդիպեցին 50 տարի անց> և <Ոստիկանության մարզիկ վետերանները> հոդվածները: Կրթահամալիրի տարածքում տեղադրված ցուցափեղկում տեղադրվել է կրթահամալիրի <Պատիվ ունեմ> պաշտոնաթերթի 2023թ. 9 համար:

Գրքում լուսաբանելու համար թանգարանի 2 նկար հանձնվել է Կրթահամալիրում պայմանագրային հիմունքներով դասավանդող, պատմական գիտությունների դոկտոր Ռ.Սահակյանին՝ պատճենահանման համար:

1957թ. ՀՍՍՀ ՆԳ մինիստր Հ.Մելքոնյանի հարազատներին հայտնաբերելու հարցում օգնություն է ցուցաբերվել ՀՀ ՊՆ <Մայր

Հայաստան> ռազմական պատմության թանգարանի գիտաշխատող Գ.Քարամյանին:

Հաշվետու ժամանակաշրջանում թանգարան են այցելել 480, իսկ թանգարանի աշխատանքները վերսկսելուց հետո՝ 4230 անձ:

2023թ. ընթացքում թանգարան են այցելել՝ միջազգային քրեական հետաքննությունների վերապատրաստման ծրագրի (ԻՍԻԹԱՓ) ներկայացուցիչները, Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի սովորողները, ԱՄՆ հետաքնությունների դաշնային բյուրոյի, ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության, ՀՀ ՆԳՆ, Իսպանիայի Թագավորության քաղաքացիական գվարդիայի, Ֆրանսիայի Հանրապետության Ազգային ժանդարմերիայի, Վրաստանի ՆԳՆ, Մոլդովայի, Ռումինիայի Հանրապետությունների ոստիկանական մարմինների, Չեխիայի ոստիկանության ներկայացուցիչները, ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետի տեղակալ Վ.Վարդանյանը, Երևանի միլիցիայի միջնակարգ-մասնագիտական հատուկ դպրոցի 1972-1973թթ. վեցերորդ շրջանավարտները, ՌԴ ՆԳՆ Թմրամիջոցների շրջանառության դեմ հսկողության ԳՎ և ՀՀ ոստիկանության ՔՈԳՎ ներկայացուցիչները, ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի աշխատակիցները, ՀՀ ոստիկանության Կենտրոն վետերանների խորհրդի վետերան մարզիկները:

Ակտիվացել է համագործակցությունը ոստիկանության Մալաթիայի վետերանների խորհրդի նախագահ Վ.Եղիազարյանի հետ: Վերջինիս շնորհիվ թանգարան են այցելել Երևանի թիվ 11, 80, 89, 90, 92, 113, 112, 105, 121, 162 հիմնական, ավագ և միջնակարգ դպրոցների աշակերտները:

Հաշվետու ժամանակաշրջանում համագործակցությունը շարունակվել է նաև ՀՀ ոստիկանության, Լոռու և Կենտրոն վետերանների խորհուրդների հետ: 2023թ. օգոստոսի 4-ին ՀՀ ՆԳՆ կրթահամալիր էին եկել ՍՍՀՄ ՆԳՄ Երևանի միլիցիայի միջնակարգ-մասնագիտական հատուկ դպրոցի 1972-1973թթ. վեցերորդ շրջանավարտները՝ դպրոցն ավարտելու 50-ամյակը նշելու համար: Նոյեմբերի 10-ին Կրթահամալիրում էին նաև ՀՀ ոստիկանության Կենտրոն վետերանների խորհրդի ոստիկանության մարզիկ վետերանները: Նշված միջոցառումները անցել են բարձր մակարդակով, որոնց մասին լուսաբանվել է Կրթահամալիրի կայքում և պաշտոնաթերթում: Ընդորում Կրթահամալիրի <Պատիվ ունեմ> պաշտոնաթերթի 25-ական օրինակ հանձնվել է վետերանների խորհուրդների նախագահներին:

Նշված ժամանակաշրջանում որոշակի աշխատանքներ են տարվել նաև թանգարանային ֆոնդերի ուղղությամբ:

Սահմանված կարգով ՀՀ Ազգային հերոս, միլիցիայի կապիտան Գեղազնիկ Միքայելյանի համազգեստը և Խորհրդային Միության հերոս Անդրանիկ Մանուկյանի բրոնզե կիսանդրին վերադարձրվել է ՀՀ ՊՆ <Մայր Հայաստան> ռազմական պատմության թանգարանին և առաջարկվել թանգարանի ֆոնդերի հաշվառումից հանել նշված առարկաները:

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի պետի <ՀՀ ոստիկանության պատմության թանգարանի ֆոնդերը գույքագրելու մասին> թիվ 464-Ա հրամանի համաձայն գույքագրվել է 268 առարկա և ընդհանուր ֆոնդերի թիվը կազմել է 5722 միավոր:

Հաշվետու ժամանակաշրջանում թանգարանի աշխատանքները նաև գնահատվել են:

ՀՀ ոստիկանության վետերանների խորհրդի նախագահ Գ.Աբովյանի առաջարկությամբ և ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ Մ.Մուրադյանի համաձայնությամբ՝ ՀՀ ոստիկանության պետի 2023թ. ապրիլի 14-ի թիվ 830–Ա հրամանով երիտասարդ սերնդին հայրենասիրական ոգով դաստիարակելու համար ՀՀ ոստիկանության պատմության թանգարանի առաջատար մասնագետ Դ. Հովսեփյանը պարգևատրվել է <Ոստիկանության 100-ամյա> հոբելյանական մեդալով:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԹԱՆԳԱՐԱՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ

Դ.ՀՈՎՍԵՓՅԱՆ

< > հունվարի 2024 թ.